



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28052

Յունուար 24, 1988

Արժանաշնորհ
Տ. Յուսիկ Բհնյ. նշանեան
Առժամեայ Հովիւ
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Թորոնթօ.

Սիրելի Տէր Յուսիկ,

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. կաթողիկոս, յոյեմբեր 22, 1982 թուակիր նամակով կը յայտնէ թէ Գանատայի նոր կազմուող թեմին համար պատրաստուած կանոնադրութեան նախագիծը կը նկատէ ՝ ընդունելի հիմք, ընթացք տալու համար նոր թեմի կազմաւորման աշխատանքներուն եւ այս նախագիծի տրամադրութիւններուն համաձայն զուժարելու Գանատայի անդրանիկ Պատգամաւորական ժողովը...:

Զեզի կը յիշեցնենք թեմական խորհուրդի հետ մեր պատրաստած նախագիծը Հայց. Եկեղեցւոյ Գանատայի թեմը կազմակերպելու համար առնուելիք քայլերուն, փետրուար 19, 1981ին վաւերացուած եւ Գանատայի մեր եօթը համայնքներուն ղրկուած:

Այդ նախագիծին համաձայն Գործադիր Մարմին մը նշանակուեցաւ որ Մարտ 28էն մինչեւ Յունիս 31, 1981, հինգ նիստերու մէջ վերանկատեց Գանատայի թեմի կանոնադրութեան յօդուածները, զանոնք ներկայացուց մեզի եւ թեմական խորհուրդին: Եւ մենք կանոնադրութիւնը ղրկեցինք Վեհափառ Հայրապետին ի վաւերացումն:

Ներկայիս պատրաստ ենք առնելու յաջորդ քայլերը նախագիծին մէջ յիշուած:

Յունուար 17, 1983 թուակիր մեր նամակով հրահանգած ենք Գանատայի մեր եօթը համայնքներուն կատարելու ՝ ընտրութիւն թեմական պատգամաւորներու՝ Գանատայի առանձին թեմի անունով զուժարուելիք առաջին թեմական Պատգամաւորական ժողովին համար...:

վեհափառ Հայրապետը Գանատայի Թեմական կանոնադրութեան Յօդուած Ա., Հատուած 1-ի մէջ փոփոխութիւն կատարած է, եւ Հատուած 1-ը պէտք է սրբազրել ըստ հետեւեալին.

՝՝ Այս Թեմին անունը պիտի ըլլայ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑ-ՈՅ ԳԱՆԱՏԱՅԻ ԹԵՄ:

Այս Թեմին Հայաստանեայց եկեղեցիները կը կազմեն կրօնական եւ վարչական միութիւն մը կանոնական իրաւասութեանը ներքեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ի Սուրբ Էջմիածին եւ իբրեւ այդպիսի կ'ընդունին եւ կ'ենթարկուին օրէնքներուն եւ կանոններուն Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյն, որ այս կանոնադրութեան մէջ պիտի յիշատակուի իբրեւ Հայաստանեայց Եկեղեցի:

Հայաստանեայց Եկեղեցւոյ ղաւանանքի, ծէսերու, կարգի ու կանոնի վերաբերեալ բոլոր հարցերը ենթակայ են գերագոյն եկեղեցական իշխանութեան Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոսին որ կը բնակի ի Ս. Էջմիածին:

Այժմ հետեւեալ պարտականութիւնները կը յանձնենք Գործադիր Մարմինին.

1.- Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետի նոյեմբեր 22, 1982 թուակիր նամակով հաստատուած ՝՝ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Գանատայի Թեմի ՝՝ կանոնադրութիւնը հիմք գործածելով ՝՝ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Գանատայի Թեմը ՝՝ արձանագրել (ինքօրփօրէյթ) իբրեւ Գանատական իրաւական անձնաւորեալ կազմակերպութիւն:

2.- Գործադիր Մարմինը պարտի ճշդել տեղը եւ թուականը գումարուելիք Գանատայի Թեմի առաջին Թեմական Պատգամաւորական ժողովին, 1983 Յունիս ամսուան ընթացքին:

3.- Մինչեւ Մարտ 30, 1983, մեզի եւ Թեմական Խորհուրդին ներկայացնել գումարուելիք առաջին Թեմական Պատգամաւորական ժողովի օրակարգը:

4.- Գործադիր Մարմինը պիտի բաղկանայ հետեւեալ անձերէ.-

- | | |
|--|-----------|
| 1. Հոգ2. Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան | Նախագահ |
| 2. Տքթ. Արշաւիր Կէօնճեան (Մոնթրէալ) | Ատենապետ |
| 3. Սարգիս Չիլինկիրեան (Թորոնթօ) | Ատենադպիր |
| 4. Սեդրակ Գալփաքեան (Վանզուվըր) | Գանձապահ |
| 5. Օննիկ Թորոսեան (Նորթ Եորք, Թորոնթօ) | |
| 6. Հրաչ Պետրոսեան (Համիլթօն) | |
| 7. Լեւոն Ժիվան (Օթթաուա) | |

Գործադիր Մարմնի անդամներուն կը մաղթենք քաջաողջութիւն եւ իրենց աշխատանքներուն ամբողջական յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՊՈՍ
Առաջնորդ

Օրինակ՝ Ժխական Խորհուրդի Ատենապետին